



ՀՐԱՏՈՒ

Փետրվար 2013

Շուկաներ Մեղրիի համար

Ընթանալով առաջ

«Շուկաներ Մեղրիի համար» ծրագիրը ֆինանսավորվում է Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության կողմից: Ծրագրի երկրորդ փուլը (դեկտեմբեր 2012-նոյեմբեր 2016) իրականացվում է շվեյցարական HELVETAS Swiss Intercooperation-ի և «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամի համատեղ ջանքերով: Ծրագրի հիմնական նպատակն է օժանդակել Մեղրիի տարածաշրջանում տնտեսական կայուն զարգացմանը և աղքատության կրճատմանը՝ ավելացնելով փոքրածավալ պտղաբուծական տնտեսությունների եկամուտները՝ շահութաբերության բարձրացման և նոր շուկաների ստեղծման շնորհիվ:

Հիմնական միջոցառումներ

Սույն թվականի հունվարի 29-ից մինչև փետրվարի 6-ը «Շուկաներ Մեղրիի համար» ծրագրի թիմը գտնվում էր Մեղրիում: Գործուղման ընթացքում հանդիպումներ տեղի ունեցան Սյունիքի փոխարգելիչի, համայնքապետների, Մեղրի և Ագարակ քաղաքների քաղաքապետների, ինչպես նաև Մեղրիի տարածաշրջանի ակտիվ ֆերմերների հետ: Հանդիպումները հիմնականում կրում էին տեղեկատվական բնույթ՝ հետագա համագործակցության ակնկալիքով: Թիմը ներկայացրեց ծրագրի ներկրող փուլի հիմնական նպատակները և գործողությունները, իսկ ֆերմերները՝ իրենց առաջնային խնդիրները: Պետական կառույցների ներկայացուցիչները իրենց տեսակետները ներկայացրեցին տարածաշրջանի զարգացման վերաբերյալ և թիմի հետ քննարկեցին հետագա համագործակցության հեռանկարները:

Այնուհետև թիմը Մաթիաս Հերրի հետ (HELVETAS Swiss Intercooperation) մշակեց 2013 թվականի աշխատանքային պլանը, որը կհաստատվի հաջորդ ամիս:

Նոր գիտելիքների ձեռքբերում

Փետրվարի 18-20 ժամանակահատվածում «Շուկաներ Մեղրիի համար» ծրագրի թիմը մասնակցեց «Շուկաներ աղբատների համար» վերապատրաստման դասընթացին, որը կազմակերպվել էր Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում: Դասընթացի մասնակիցներն էին Հայաստանում, Վրաստանում և Ադրբեյջանում Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության կողմից ֆինանսավորվող ծրագրերի 22 աշխատակից: Մասնակիցներն ընդհանուր գիտելիքներ ստացան «Շուկաներ աղբատների համար» մոտեցման և գործնականում դրա կիրառման վերաբերյալ: Դասընթացը կազմակերպվել էր Մաթիաս Հերրի, Անդրյու Ուիլսոնի և Եվգենի Ռյազանովի կողմից: Այս դասընթացը մասնակիցներին հնարավորություն տվեց ձեռք բերել գիտելիքներ առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործման վերաբերյալ՝ տարբեր շուկայական համակարգերում փոփոխություններ խթանելու նպատակով (օրինակ՝ գյուղատնտեսությունում պահանջվող տարատեսակ ներդրումների կատարում, ֆերմերների արտադրանքի վաճառքի կազմակերպում և այլն), ինչը չափազանց կարևոր է փոքր տնտեսությունների համար՝ ձեռք բերելու կայուն և մեծամասշտաբ ազդեցություն:

Նախատեսված միջոցառումներ

«Շուկաներ Մեղրիի համար» ծրագրի թիմը Հայաստանի փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման ազգային կենտրոնի և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության «Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակություն» ծրագրի հետ համատեղ նախատեսում է պիլոտային ծրագիր իրականացնել չրագործության ոլորտում:

Ծրագրի հիմնական նպատակն է զարգացնել Մեղրիի ֆերմերների գիտելիքներն ու հմտությունները, որը կխթանի արտադրողականության բարձրացումը, ինչը և կապահովի բարձր եկամտաբերություն և կնպաստի պոտենցիալ գնորդների հետ կայուն կապերի հաստատմանը: